

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**  
**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 36/8**

ք.Երևան

26 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով 2018թ. ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու հնարավորություն ընձեռելու վերաբերյալ Ա/Ձ Մելքոն Էլոյանի դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

Ա/Ձ Մելքոն Էլոյանը հայտնում է, որ ս/թ ապրիլի 5-ին գրանցվել է ՀՀ պետական ռեգիստրում՝ որպես անհատ ձեռնարկատեր: Սահմանված ժամկետում այցելել է հարկային մարմին, որտեղ ներկայացրել է դիմում՝ ընտանեկան ձեռնարկատիրության համակարգում գրանցվելու համար և ներկայացրել համապատասխան փաստաթղթերը:

Հարկային տեսչությունում իրեն հայտնել են, որ պետք է ակտիվացնի նույնականացման քարտը:

Նույնականացման քարտն ակտիվացնելու համար հարկային տեսչությունից էլեկտրոնային փոստի միջոցով պետք է ստանար հաղորդագրություն՝ համապատասխան ծածկագրերի վերաբերյալ: Շուրջ երեք օր չի ստացել հաղորդագրությունը, իսկ ստանալուց հետո կատարել է վճարում նույնականացման քարտն ակտիվացնելու համար:

Կատարված վճարումից հետո ստացած ծածկագրերը հաշվապահի կողմից մի քանի անգամ մուտքագրվել է էլեկտրոնային եղանակով, սակայն համակարգում եղել են որոշ թերություններ, որոնց պատճառով էլեկտրոնային դիմումը չի ստացվել հարկ վճարողների էլեկտրոնային համակարգի կողմից:

17.05.2018թ. Ա/Ձ Մելքոն Էլոյանը դիմել է Մաշտոցի հարկային տեսչություն, որտեղ իրեն բացատրել են, որ էլեկտրոնային դիմումը չի ստացվել համակարգի կողմից և նա հանդիսանում է ԱԱՀ վճարող:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Մելքոն Էլոյանը խնդրում է աջակցել, որպեսզի էլեկտրոնային համակարգում փոփոխություն կատարվի և կարողանա գրանցվել ընտանեկան ձեռնարկատիրության համակարգի շրջանակներում:

**2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Ա/Ձ Մելքոն Էլոյանը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում է ստացել 05.04.2018թ.:

Ա/Ձ Մելքոն Էլոյանը փորձել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթերը, սակայն հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում առկա խնդիրներով պայմանավորված իրեն չի հաջողվել: Առկա խնդիրների մասին Ա/Ձ Մելքոն Էլոյանը բազմիցս տեղեկացրել է հարկային մարմնին:

### **3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ**

ՀՀ հարկային օրենսգրքի 267-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներ են համարվում նույն հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված պայմանները բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը հետևյալ դեպքերում և ժամկետներում.

1) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր:

- 2-րդ մասի համաձայն՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ կարող է համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը, որի նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 18 միլիոն դրամը:

- 3-րդ մասի համաձայն՝ անհատ ձեռնարկատերը կարող է համարվել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ, եթե իր գործունեությունը (այդ թվում՝ արտոնագրային հարկի օբյեկտ համարվող գործունեությունը) իրականացնում է բացառապես իր ընտանիքի անդամների (այդ թվում՝ որպես վարձու աշխատողի) միջոցով:

Քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն Ա/Ձ Մելքոն Էլոյանը բավարարում է Օրենսգրքով նախատեսված բոլոր պահանջներին 2018թ. ընթացքում ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու համար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Մելքոն Էլոյանը հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում առկա տեխնիկական խնդիրներով պայմանավորված չի կարողացել սահմանված ժամկետում ներկայացնել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթերը (գործում առկա են նշված փաստը հիմնավորող ապացույցները), Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է Ա/Ձ Մելքոն Էլոյանին հնարավորություն ընձեռել

ներկայացնելու պահանջվող փաստաթղթերը 2018թ. ընթացքում ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու համար:

#### 4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

#### ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ա/Ձ Մելքոն Էլոյանի դիմում-բողոքը բավարարել:
2. Ա/Ձ Մելքոն Էլոյանի կողմից ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթերը ներկայացվելու դեպքում 2018թ. ընթացքում նրան համարել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ